ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

Ծաղկաձորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար համայնքի բակային տարածքների կապիտալ վերանորոգման՝ ասֆալտապատման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԾՔ-ԳՀԱՇՁԲ-19/4 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի ապրիլի 9-ին կնքված N ԾՔ-ԳՀԱՇՁԲ-19/4 պայմանագրում 2019 թվականի օգոստոսի 27-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը /կցվում է/:

Փոփոխության առաջացման պատճառ – Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար նախատեսված ժամկետների երկարաձգման անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն – Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար նախատեսված ժամկետները երկարաձգել 30 /երեսուն/ օրացուցային օրով՝ այն սահմանելով 2019թվականի սեպտեմբերի 30-ը:

Փոփոխության հիմնավորում - ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 56-րդ կետի 2-րդ ենթակետ և Պայմանագրի 8.5 կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Արփինե Ավետիսյանին:

Հեռախոս՝ 0223-6-04-02:

Էլ. փոստ՝ tsaghkadzor.kotayq@mta.gov.am

Պատվիրատու՝ Ծաղկաձորի համայնքապետարան